



ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑ

ԵԱՏՄ-ում Հայաստանի անդամակցությունը դադարեցնելու վերաբերյալ առաջարկի լուսաբանումը Հանրային հեռուստաընկերությամբ

Սեպտեմբերի 8-ին ՀՀ ԱԺ «Ելք» խմբակցության նիստի ընթացքում [ընդունվել էր](#) օրենսդրական նախաձեռնության կարգով «Հայաստանի Հանրապետության մասով Եվրասիական տնտեսական միության պայմանագրի գործողությունը դադարեցնելու գործընթաց սկսելու վերաբերյալ» ԱԺ հայտարարության նախագիծ ներկայացնելու որոշումը: Որոշման ընդունման պահից մինչև սեպտեմբերի 18-ը ՀՀ մամուլի մշտադիտարկումը ցույց է տալիս, որ օնլայն լրատվամիջոցներում ԵԱՏՄ-ից դուրս գալու նախագիծը բազմակողմանիորեն քննարկվում է և դարձել է ներքաղաքական կյանքի առաջնային հարցերից մեկը: Այդուհանդերձ, «Իրազեկ քաղաքացիների միավորման» իրականացրած մեդիա մոնիտորինգի արդյունքները ցույց են տալիս, որ Հանրային հեռուստաընկերության լրատվական հաղորդման՝ «Օրակարգի», թողարկումների ընթացքում խնդիրը պատշաճ կերպով չի լուսաբանվել, իսկ չափավոր լուսաբանվել է բացառապես միակողմանի:

Դիտարկումներ

Սեպտեմբերի 8-ին, թեև չկա անդրադարձ ԵԱՏՄ-ից դուրս գալու վերաբերյալ «Ելքի» նախագծին, սակայն «Օրակարգ» լրատվական հաղորդման երեկոյան ժամը 21:00 հիմնական թողարկման ընթացքում կա [ընկալված](#) ՀՀԿ գերագույն մարմնի հերթական նիստից: Նիստի ընթացքում ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովը ամփոփել էր ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի և ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի [հանդիպումը](#) Սոչիում՝ նշելով, որ «այս փուլում ՀՀ-ՌԴ ռազմավարական-դաշնակցական հարաբերությունները բոլոր ուղղություններով դինամիկ զարգանում են»: Նրա այս հայտարարությանը զուգահեռ Հանրային հեռուստաընկերության «Օրակարգ» լրատվական հաղորդման խմբագրությունը տողատակում տեղադրել է հետևյալ արտահայտությունները

«ՀՀ-ՌԴ հարաբերությունները զարգանում են, «ԵԼՔ» դաշինքը ԱԺ է ներկայացրել ԵԱՏՄ-ից դուրս գալու նախագիծ»:





Որին անմիջապես հաղորդում է տողատակի հետևյալ գրությունը՝ «ՀՀ-ՌԴ հարաբերությունները զարգանում են, «ՀՀ արտաքին քաղաքական ուղղությունները վերանայման կարիք չունեն» Շարմազանով»:



Մեմոտեմբերի 10-ին «Օրակարգի» ժամը 21:00 թողարկման մեջ ԵԱՏՄ-ն միայն հիշատակվում է՝ հպանցիկ, «Արարատ գրուպ» ընկերության որակի հսկման բաժնի ղեկավար Արսեն Մինասյանի կողմից, երբ վերջինս [պատմում է](#) իրենց նոր արտադրանքի վերաբերյալ՝ գովերգելով ԵԱՏՄ նոր տեխնիկական կանոնակարգը:

Մեպտեմբերի 11-ին «Օրակարգի» ժամը 21:00 գլխավոր [թողարկումը](#) կրկին առանց բանավոր լուսաբանման տողատակում միակողմանի մեկնաբանում է ԵԱՏՄ կազմից դուրս գալու վերաբերյալ նախագիծը:



Փաստորեն, «Օրակարգի» սեպտեմբերի 11-ի թողարկման ընթացքում տողատակում հղում է տրվում ՀՀԿ ներկայացուցիչ Էդուարդ Շարմազանովին, ապա հիշատակվում ԵԱՏՄ-ից դուրս գալու վերաբերյալ Հանրապետական կուսակցության ներկայացուցչի և Ծառուկյան դաշինքի ղեկավար Գագիկ Ծառուկյանի խոսքերը: Բոլոր երեք նախադասություններն էլ ունեն բացառապես բացասական հնչեքանգ, բացակայում է հարցի լուսաբանման բազմակողմանիությունը:

Մեպտեմբերի 12-ին ժամը 21:00-ի հիմնական թողարկման ընթացքում «Օրակարգը», վերջապես անդրադառնալով խնդրին, նշում է. «Հայաստանի անդամակցումը ԵԱՏՄ-ին և ՀԱՊԿ-ին ոչ միայն վերանայման կարիք չունի այլև ունի ընդլայնման միտում», - այսօր ազգային ժողովում հայտարարել է փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովը: Նա նշել է, որ անվտանգության խնդիրը շարունակելու է լինել մեր երկրի օրակարգային կարևորագույն հարցը: «Եվս մեկ անգամ ամրագրում ենք, որ Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները, այն է՝ հայ-ուսական դաշնակցային հարաբերությունները, Հայաստանի անդամակցումը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը և Եվրասիական տնտեսական միությանը, ոչ միայն վերանայման կարիք չունեն, այլ նաև ունեն ընդլայնման միտումներ»:

Մեպտեմբերի 13-ին «Ելքի» ԵԱՏՄ-ից դուրս գալու նախագծի քննարկումները ԱԺ-ում վերջապես լուսաբանվում են, սակայն կրկին միակողմանի: Ժամը 21:00 «Օրակարգի» թողարկման ընթացքում: Ընդ որում, «Օրակարգի» հաղորդավարուհին ռեպորտաժի սկզբում նշում է. ««Ելքը» ԵԱՏՄ թեման է թեժ պահում: «Ինչո՞ւ ենք այնտեղ» հարցնում է Մանե Թանդիլյանը»: Այնուհետև, «Օրակարգը» ցուցադրում է վարչապետ Կարեն Կարապետյանի ուղիղ խոսքը, որում նա նշում է. «Կա՞ այսօր արտադրատեսակ, որը այլ շուկաներ պատրաստ ենք տանել, արտահանել, չենք արտահանում ինչ ա թե ԵԱՏՄ անդամ ենք»: Այնուհետև Կարեն Կարապետյանը նշում է, որ Եվրամիության շուկա Հայաստանի արտահանման աճի տոկոսն ավելի բարձր է, քան ԵԱՏՄ:

Մեպտեմբերի 17-ին «Օրակարգի» ժամը 21:00 կիրակնօրյա ամփոփիչ թողարկման ընթացքում կա ևս մեկ անդրադարձ ԵԱՏՄ-ին՝ կրկին բացահայտ գովերգությամբ: Հաղորդավարը նշում է, որ հայկական ոչ միայն խմիչքի, այլ նաև սննդամթերքի պահանջարկը ավելացել է ԵԱՏՄ շուկայում, և դա հաստատում են նաև արտահանման ներդրումային ապահովագրական գործակալությունում: Ուշագրավ է, որ թողարկման [այս ամսը](#) վերաբերում է ընդհանուր արտահանվող ապրանքների նոր քաղաքական մեխանիզմներին ու դրանց պետական ապահովագրությանը, սակայն որպես օրինակ բերվում է միայն արտահանումը ԵԱՏՄ և Ռուսաստան:

Մեպտեմբերի 9-ին, 14-ին, 15-ին և 16-ին Հ1-ի «Օրակարգը» բացարձակ չի անդրադարձել խնդրո առարկա հարցին:

Եզրահանգումներ

Փաստորեն, «Օրակարգի» եթերում չկա բալանսավորված ու բազմակողմանի լուսաբանում: Չի տրվում ԵԱՏՄ-ից դուրս գալու նախագծի դրդապատճառների կամ նախագծին կողմ որևէ փաստարկ: «Օրակարգի» եթերում գերիշխում է իշխող կուսակցության և այն քաղաքական ուժերի տեսակետների լուսաբանումը, որոնք համարում են, որ չկա

այլընտրանք ԵԱՏՄ-ին: Մշտադիտարկումից կարելի է փաստել, որ Հանրային հեռուստաընկերության եթերում բացահայտ համակրանք է տրվում ԵԱՏՄ-ին՝ բացառելով ցանկացած այլընտրանք:

«Իրազեկ քաղաքացիների միավորում»

18.09.2017թ. Երևան